

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գործիսի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գիտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է, որի նպատակն է կազմակերպել, համակարգել և օժանդակել Համալսարանի ստորաբաժանումների և գիտական խմբերի կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեությանը:
2. Սույն կանոնակարգը սահմանում է Կենտրոնի գործունեության իրավական հիմքերը:
3. Կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրով (2019-2023թթ.), Համալսարանի կառավարման մարմինների որոշումներով, ռեկտորի հրամաններով, սույն կանոնակարգով:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

4. Կենտրոնի ղեկավարումն իրականացնում է ղեկավարը:
5. Կենտրոնի ղեկավարն իր գործունեությամբ հաշվետու է Համալսարանի ռեկտորին:
6. Կենտրոնը, ելնելով իր կողմից իրականացվող գիտական ու կազմակերպական աշխատանքների բնույթից և ծավալից, մշակում է իր հաստիքացուցակը՝ ըստ սահմանված չափանիշների, որը հաստատվում է Համալսարանի ռեկտորի կողմից:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. **Կենտրոնի խնդիրներն են՝**
 - 1) Համալսարանի գիտահետազոտական ոլորտի կառավարման ու աշխատանքների կազմակերպման համակարգի կատարելագործումը,
 - 2) գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների ապահովումը,
 - 3) հիմնարար և կիրառական բնույթի (ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող) գիտելիքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանումը,
 - 4) հայագիտության ոլորտի զարգացումը,

1.  կ.տ.

- 5) հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի արդյունավետ փոփոխականացված համակարգի ձևավորման նախադրյալների ստեղծումը,
- 6) միջազգային գիտական համագործակցության զարգացումը:

8. **Կենտրոնի գործառույթներն են՝**

- 1) ստեղծել Համալսարանի գիտական և հետազոտական գործունեության ոլորտը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտեր,
- 2) մշակել և սահմանել Համալսարանի գիտական և հետազոտական գործունեության ոլորտի գերակայություններն ու առաջնահերթությունները,
- 3) մշակել և ներդնել գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության և արդիականության գնահատման գործիքներ, առաջընթացը չափազրոյ մեխանիզմներ և ցուցանիշներ,
- 4) իրականացնել գիտահետազոտական ոլորտի համար ֆինանսական պլանավորում,
- 5) իթանել հիմնարար և կիրառական բնույթի (ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող) գիտելիքների ձեռքբերմանն ուղղված հետազոտությունները,
- 6) մշակել ուսանողների և դասախոսների՝ հետազոտական գործընթացներում ներգրավման մեխանիզմներ,
- 7) հետազոտության ոլորտում, այդ թվում նաև միջազգային մակարդակում, հաստատել կայուն համագործակցություններ:

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

9. Համալսարանի կողմից հատկացվող միջոցները:
10. Դրամաշնորհներից ստացվող գիտական հետազոտությունների ֆինանսավորման միջոցները:
11. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության փորձագիտական հանձնաժողովի մրցույթն անցած թեմաների պետական ֆինանսավորման միջոցները:
12. Այլ աղբյուրները:

V. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Սույն կանոնակարգը, դրա փոփոխությունները և լրացումները հաստատվում են Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

ԳՊՀ ռեկտոր՝


Արտուշ Դուկասյան